AMCA

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025



011 20-14-10

www.amca.am

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ **ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Խորհրդատվական պարզաբանումներ)

Հարցուպատասխանի ձևաչափով մշակված խորհրդատվական պարզաբանումների նպատակն է ներկայացնել պարտադիր հաշտարարության էության, վեճերի բնույթի, պարտադիր հաշտարարության բուն գործընթացի, հաշտարարի վարձատրության և այլ հարցերի կապակցությամբ պարզաբանումներ:

Հաշվի առնելով, որ պարտադիր հաշտարարության մասին հնչում են բազմաթիվ հարցեր, ինչպես նաև նպատակ ունենալով բարձրացնել նոր ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածությունը՝ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը անդրադարձ է կատարել պարտադիր հաշտարարությանը վերաբերող ամենակարևոր հարցերին՝ փորձելով դրանց պատասխանները ներկայացնել հնարավորիս պարզ ու մատչելի տարբերակով: Նյութը ներառում է նաև գործնական հարցեր ու պատասխաններ, ինչը դարձնում է այն առավել կիրառելի և հասանելի թե՛ իրավաբանների, թե՛ հաշտարարների և թե՛ քաղաքացիների համար:

Սույն խորհրդատվական պարզաբանումները հրապարակվել են «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի կողմից
© Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են, 2025թ.

Սույն նյութը կարող է օգտագործվել միայն հեղինակին հստակ նշելու պայմանով: Արգելվում է նյութի վերարտադրումը, փոփոխումը կամ տարածումը առանց նախնական գրավոր համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերից, երբ նշվում է հեղինակի անվանումը և պահպանվում է բնօրինակի ամբողջականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԾՐՋԱՆԱԿԸ 7

1. Ի՞նչ է պարտադիր հաշտարարությունը: 7

2. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է կողմերի գրավոր համաձայնությունը (հաշտարարության համաձայնությունը): 7

3. Ո՞վ է հաշտարարը: 7

4. Արդյո՞ք միայն իրավաբանական կրթություն ունեցող անձը կարող է լինել հաշտարար և որտե՞ղ կարելի է գտնել հաշտարարների մասին տեղեկատվություն: 7

5. Ո՞ր վեճերով է, նախքան դատարան դիմելը, հաշտարարությունը պարտադիր: .. 8

6. Արդյո՞ք վերը թվարկված վեճերով նախքան դատարան դիմելը, կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության: 8

7. Ամուսնաընտանեկան ո՞ր վեճերով չի կարող իրականացվել հաշտարարություն՝ դրանք դատարանի բացառիկ իրավազորությանը հանձնված լինելու հիմքով: 9

8. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթացում կարող են միաժամանակ ներկայացվել մեկից ավելի պահանջներ (օրինակ՝ ամուսնալուծության և ալիմենտ բռնագանձելու պահանջներով) և արդյո՞ք դրանից փոփոխվում է հաշտարարի վարձատրության վճարը: 10

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ, ՀԱՇՏԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (ՆՇԱՆԱԿՈՒՄ), ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ 11

9. Ինչպե՞ս սկսել պարտադիր հաշտարարության գործընթաց (ո՞ւմ դիմել): 11

10. Ի՞նչ եղանակով է անհրաժեշտ ներկայացնել դիմում: 11

11. Ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի պարտադիր հաշտարարություն իրականացնելու դիմումը և ի՞նչ փաստաթղթեր պետք է կցվեն: 12

12. Ինչպե՞ս ընտրել հաշտարարի թեկնածու: 12

13. Արդյո՞ք կողմերը կարող են հաշտարարի համատեղ թեկնածու ընտրել արդարադատության նախարարության կողմից հրապարակված և պարտադիր հաշտարարության գործերով առանձնացված հաշտարարների ցանկում չընդգրկված հաշտարարներից: 13

14. Ի՞նչ է տեղի ունենում, երբ անձը, հաշտարար նշանակելու մասին դիմում է ներկայացնում արդարադատության նախարարություն և հաշտարար չի նշանակվում: 13

15. Ինչպե՞ս է որոշվում հաշտարարի վարձատրության գումարի չափը պարտադիր հաշտարարության դեպքում: 13

16. Արդյո՞ք հաշտարարի վարձատրության գումարը կարող է գերազանցել Կառավարության որոշմամբ սահմանված՝ հաշտարարի վարձատրության դրույքաչափերը: 14

17. Ինչպե՞ս է հաշվարկվում հաշտարարի վարձատրության գումարը, երբ հաշտարարության տևողությունը գերազանցում է 2 ժամը: 14

18. Ի՞նչ համամասնությամբ են կողմերը կատարում հաշտարարի վարձատրությունը: 14

19. Ինչպե՞ս են բաշխվում հաշտարարության ծախսերը, երբ կողմերից մեկը անվճարունակ է: 15

20. «Հաշտարարության մասին» օրենքի իմաստով ո՞վ է համարվում անվճարունակ: 15

21. Ի՞նչ գործողություն պետք է կատարի այն կողմը, ով անվճարունակ է: 15

22. Ո՞ր փուլում են կողմերը պարտավորվում վճարել հաշտարարի վարձատրության գումարը: 15

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 17

23. Պարտադիր հաշտարարության գործընթաց սկսելու համար բավարար է արդյո՞ք վիճող կողմերից մեկի դիմումը: 17

24. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթացում վիճող կողմերը պետք է հանդես գան ներկայացուցիչների միջոցով: 17

25. Հաշտարար նշանակվելուց հետո ի՞նչ գործողություններ է պարտավոր ձեռնարկել հաշտարարը: 17

26. Արդյո՞ք հաշտարարությունը կարող է շարունակվել, երբ առկա են կողմի հետ փոխկապակցվածության հիմքեր: 18

27. Արդյո՞ք հաշտարարի հետ փոխկապակցվածության հիմքերի կամ անաչառության կասկածով պայմանավորված պարտադիր հաշտարարությունն ավարտելը բավարար նախապայման է, այնուհետև, նույն վեճով դատարան դիմելու համար: 18

28. Ի՞նչ ժամկետներում է հաշտարարը պարտավոր կազմակերպել հաշտարարության առաջին հանդիպումը: 18

29. Արդյո՞ք կողմերը պարտավոր են մասնակցել պարտադիր հաշտարարությանը և ի՞նչ հետևանքներ են առաջանում չմասնակցելու կամ հրաժարվելու դեպքում: 19

30. Ինչ եղանակով է իրականացվում հաշտարարության վերաբերյալ կողմերի ծանուցումը: 19

31. Ինչ միջոցներ պետք է ձեռնարկի հաշտարարը այն դեպքում, երբ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկելու դեպքում չի ստանում ծանուցման մասին անդորրագիրը: 20

32. Արդյո՞ք կողմերը պարտավոր են հաշտարարին հայտնել իրենց հասցեների փոփոխության մասին և ինչ հետևանքներ են առաջանում չհայտնելու պարագայում: 20

33. Արդյո՞ք պարտադիր հաշտարարությունը կարող է իրականացվել նաև առցանց: 20

34. Արդյո՞ք հաշտարարության հետ կապված տեղեկությունները կարող են հրապարակվել: 21

35. Միջինում քանի՞ օր կարող է տևել պարտադիր հաշտարարության գործընթացը: 21

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԸ 22

36. Ե՞րբ է ավարտվում պարտադիր հաշտարարության գործընթացը: 22

37. Ո՞ր դեպքերում է կազմվում հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն: 22

38. Ի՞նչ պահանջների պետք է համապատասխանի հաշտության համաձայնությունը: 23

39. Ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը: 23

40. Ովքե՞ր են ստորագրում հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը: 24

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ 25

41. Ո՞ր դեպքում է մինչև 2 ժամ հաշտարարությունը փոխհատուցվում: 25

42. Ո՞ւմ կողմից և ե՞րբ է փոխհատուցվում մինչև 2 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարը: 25

43. Ինչ է անհրաժեշտ կցել արդարադատության նախարարություն ներկայացվող՝ մինչև 2 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարի փոխհատուցման մասին դիմումին: 25

44. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործերով մինչև 2 ժամ տևողությամբ հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարը պետական բյուջեից ենթակա է փոխհատուցման այն դեպքում, երբ հաշտարարությունը իրականացվել է մշտապես գործող հաշտարարական հաստատության միջոցով և/կամ կողմերը համաձայնության են եկել հաշտարարի վարձատրության այլ չափերի շուրջ: 26

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ, ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ 27

45. Ի՞նչ հետևանք է առաջացնում առանց պարտադիր հաշտարարության փուլը սպառելու դատարան դիմելը: 27

46. Ե՞րբ և ինչպիսի՞ հիմքերի առկայության դեպքում անձը կարող է պարտադիր հաշտարարության ենթակա ամուսնաընտանեկան գործերով դիմել դատարան: ... 27

47. Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել կողմը, երբ ամուսնաընտանեկան վեճով կնքվել է հաշտության համաձայնություն, սակայն մյուս կողմը հրաժարվում է ձեռքբերված պայմանավորվածությունից և չի կատարում հաշտության համաձայնությամբ ստանձնած իր պարտականությունը: 28

ԲԱԺԻՆ

I

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Ի՞նչ է պարտադիր հաշտարարությունը:

Պարտադիր հաշտարարությունը ամուսնաընտանեկան մի շարք վեճերով կողմերին առաջադրվող պարտադիր օրենսդրական պահանջ է՝ նախքան դատարան դիմելը մասնակցել հաշտարարության գործընթացի: Այսինքն, ամուսնաընտանեկան համապատասխան վեճը կողմերը պետք է փորձեն լուծել նախ հաշտարարության միջոցով:

2. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է կողմերի գրավոր համաձայնությունը (հաշտարարության համաձայնությունը):

Ոչ: Պարտադիր հաշտարարության գործընթաց սկսելու համար կողմերի գրավոր համաձայնությունը պարտադիր չէ:

3. Ո՞վ է հաշտարարը:

Հաշտարարն անկախ, անկողմնակալ, գործի ելքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, ով արտոնագրվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից և իրականացնում է հաշտարարություն՝ կողմերի միջև առկա վեճը հաշտությամբ լուծելու նպատակով:

4. Արդյո՞ք միայն իրավաբանական կրթություն ունեցող անձը կարող է լինել հաշտարար և որտե՞ղ կարելի է գտնել հաշտարարների մասին տեղեկատվություն:

Ոչ: Ըստ օրենսդրական պահանջի՝ որպես հաշտարար կարող է արտոնագրվել և հաշտարարություն իրականացնել 25 տարին լրացած այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն:

ՀՀ-ում արտոնագրված հաշտարարների ցանկը կարող եք գտնել ՀՀ արդարադատության նախարարության արտոնագրված հաշտարարների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր) կամ օրինակ, այցելել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի կայքէջ՝ Կենտրոնի հաշտարարների ցանկին ծանոթանալու համար:

e-mediation.am/mediators-list

5. Ո՞ր վեճերով է, նախքան դատարան դիմելը, հաշտարարությունը պարտադիր:

Նախքան դատարան դիմելը հաշտարարությունը պարտադիր է հետևյալ գործերով՝

- ամուսնալուծություն,
- երեխայի բնակության վայրի որոշում,
- ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձում,
- ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանում,
- երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացում,
- երեխայի տեսակցության կարգի սահմանում,
- ամուսնական պայմանագրի փոփոխում կամ լուծում:

6. Արդյո՞ք վերը թվարկված վեճերով նախքան դատարան դիմելը, կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության:

Այո: Կողմերը ***կարող են չդիմել*** պարտադիր հաշտարարության միայն այն դեպքերում, երբ՝

- կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից,

- կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար,
- կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Այսինքն, նշված բացառիկ հանգամանքներում հաշտարարության գործընթաց սկսելը ուղղակիորեն կախված է կողմի կամքից և կողմն է ընտրում միանգամից դիմել դատարան, թե նախաձեռնել հաշտարարության գործընթաց:

7. Ամուսնաընտանեկան ո՞ր վեճերով չի կարող իրականացվել հաշտարարություն՝ դրանք դատարանի բացառիկ իրավազորությանը հանձնված լինելու հիմքով:

Ընտանեկան օրենսգրքով ամուսնաընտանեկան որոշ գործերով սահմանված է դատարանի բացառիկ իրավասությունը, այսինքն նման գործերը քննվում են բացառապես դատարանի կողմից և դրանցով հաշտարարության գործընթաց առհասարակ չի կարող նախաձեռնվել:

Դրանք են՝

- ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, սահմանափակումը վերացնելու մասին գործերը,
- ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը,
- երեխայի և ծնողական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետ հետագայում համատեղ ապրելու մասին պահանջով գործերը,
- ծնողական իրավունքների իրականացմանը վերաբերող դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով երեխային իրեն հանձնելու վերաբերյալ գործերը,
- երեխայից առանձին ապրող ծնողի կողմից իր երեխայի մասին դաստիարակչական ու բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան տեղեկատվություններ ստանալու պահանջը մերժվելու դեպքում նման մերժումը վիճարկելու պահանջով գործերը,
- ծնողների կամ նրանցից մեկի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ մերձավոր ազգականների հետ երեխայի շփվելու մասին որոշումը չկատարելու դեպքում, երեխայի մերձավոր ազգականների կողմից երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու պահանջով գործերը,

- ծնողական իրավունքների պաշտպանությանն առնչվող գործերը (ծնողը կարող է պահանջել վերադարձնել երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման),
- երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ծնողական իրավունքներից զրկելու պահանջով դատարան դիմելու գործերը:

8. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթացում կարող են միաժամանակ ներկայացվել մեկից ավելի պահանջներ (օրինակ՝ ամուսնալուծության և ալիմենտ բռնագանձելու պահանջներով) և արդյո՞ք դրանից փոփոխվում է հաշտարարի վարձատրության վճարը:

Այո, պարտադիր հաշտարարության գործընթացում հնարավոր է ներկայացնել մեկից ավելի պահանջներ: Մեկից ավելի պահանջներ ներկայացնելը, եթե կողմերը և հաշտարարը այլ բան չեն որոշել, չի կարող ազդել հաշտարարի վարձատրության վճարի փոփոխության վրա, քանի որ հաշտարարի վարձատրության վճարը կախված է հաշտարարության տևողությունից:

ԲԱԺԻՆ

II

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ, ՀԱՇՏԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (ՆՇԱՆԱԿՈՒՄ), ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

9. Ինչպե՞ս սկսել պարտադիր հաշտարարության գործընթաց (ու՞մ դիմել):

Պարտադիր հաշտարարության գործընթացը կարող է նախաձեռնվել մի քանի տարբերակներով.

Առաջին տարբերակ՝ եթե կողմերը ունեն փոխադարձ համաձայնություն հաշտարարի թեկնածության վերաբերյալ, ապա դիմում են իրենց նախընտրած հաշտարարին:

Երկրորդ տարբերակ՝ եթե կողմերը չունեն փոխադարձ համաձայնություն հաշտարարի թեկնածուի վերաբերյալ, ապա կողմերից մեկը դիմում է արդարադատության նախարարություն՝ ինքնաշխատ համակարգի միջոցով հաշտարար նշանակելու համար:

Երրորդ տարբերակ՝ եթե կողմերը նախընտրում են հաշտարարությունը իրականացնել մշտապես գործող հաշտարարական հաստատության միջոցով (օրինակ, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի), ապա պետք է դիմում ներկայացնեն հաստատությանը՝ նշում կատարելով կողմերի նախընտրելի հաշտարարի թեկնածուի մասին, որի հիման վրա Կենտրոնը որոշում է կայացնում հաշտարարի թեկնածուին հաստատելու մասին:

10. Ի՞նչ եղանակով է անհրաժեշտ ներկայացնել դիմում:

Եթե կողմերը պարտադիր հաշտարարությունը նախաձեռնում են վերը նշված **առաջին տարբերակով, ապա** պարզապես դիմում են հաշտարարին:

Եթե պարտադիր հաշտարարությունը նախաձեռնվում է վերը նշված **երկրորդ տարբերակով, ապա կողմերից մեկը դիմում է ներկայացնում** Հաշտարարության էլեկտրոնային համակարգի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով:

Եթե պարտադիր հաշտարարությունը նախաձեռնվում է վերը նշված **երրորդ տարբերակով, ապա դիմումը** էլեկտրոնային, փոստային կամ առձեռն եղանակով **ներկայացվում է մշտապես գործող հաշտարարական հաստատություն, որում նշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ ընտրված հաշտարարի թեկնածուի մասին:**

(Դիմումի օրինակելի ձևը՝ տե՛ս «Հավելված 1»-ում)

11. Ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի պարտադիր հաշտարարություն իրականացնելու դիմումը և ի՞նչ փաստաթղթեր պետք է կցվեն:

Դիմումը պետք է ներառի՝

- տեղեկություն վեճի կողմերի վերաբերյալ՝ կողմերի անունները, ազգանունները, հասցեները, հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեները (առկայության դեպքում) և ցանկացած այլ կոնտակտային տվյալներ, ինչպես նաև տվյալներ կողմերին ներկայացնող ցանկացած անձի (անձանց) վերաբերյալ,
- նշում ամուսնաընտանեկան վեճի տեսակի վերաբերյալ:

Դիմումին կցվում են՝

- ներկայացուցչի (ոչ փաստաբան) կողմից ներկայացվելու պարագայում՝ կցվում է նոտարական կարգով վավերացված լիազորագիր, որում հստակ պետք է նշված լինի պարտադիր հաշտարարության գործընթաց նախաձեռնելու դիմում ներկայացնելու, հաշտարարության գործընթացին մասնակցելու, հաշտարարության արդյունքում կազմված հաշտության համաձայնությունը կամ ավարտման արձանագրությունը ստորագրելու լիազորությունները,
- փաստաբան ներկայացուցչի դեպքում ներկայացվում է հասարակ գրավոր ձևով կազմված լիազորագիրը և փաստաբանական գործունեության արտոնագիրը: Լիազորագրում պետք է ներառվեն վերը նշված լիազորությունները:

12. Ինչպե՞ս ընտրել հաշտարարի թեկնածու:

Հաշտարարության կողմերի միջև փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, վերջիններս հաշտարարի թեկնածուին կարող են ընտրել ռեեստրից կամ կոնկրետ հաստատության հաշտարարների ցանկից:

Հաշտարարության կողմերի միջև փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում հաշտարարին նշանակում է արդարադատության նախարարությունը՝ կողմի դիմումի հիման վրա:

13. Արդյո՞ք կողմերը կարող են հաշտարարի համատեղ թեկնածու ընտրել արդարադատության նախարարության կողմից հրապարակված և պարտադիր հաշտարարության գործերով առանձնացված հաշտարարների ցանկում չընդգրկված հաշտարարներից:

Այո: Կողմերը կաշկանդված չեն արդարադատության նախարարության կողմից հրապարակված և պարտադիր հաշտարարության գործերով առանձնացված հաշտարարների ցանկով և կարող են ընտրել արտոնագրված հաշտարարների ռեեստրում ընդգրկված ցանկացած հաշտարարի, ով համաձայն է իրականացնել պարտադիր հաշտարարություն:

Պարտադիր հաշտարարության գործերով առանձնացված հաշտարարների ցանկից հաշտարար նշանակելու իրավակարգավորումը պարտադիր է միայն արդարադատության նախարարության համար:

14. Ի՞նչ է տեղի ունենում, երբ անձը, հաշտարար նշանակելու մասին դիմում է ներկայացնում արդարադատության նախարարություն և հաշտարար չի նշանակվում:

Այն դեպքում, երբ արդարադատության նախարարության կողմից հաշտարար չի նշանակվում, ապա տրվում է տեղեկանք, որը պարունակում է պարտադիր նշում հաշտարարի նշանակման անհնարինության պատճառների վերաբերյալ: Հաշտարարի նշանակման անհնարինության մասին տեղեկանք տրամադրվելու դեպքում, անկախ պարտադիր հաշտարարություն իրականացված չլինելու փաստից, կողմը կարող է պարտադիր հաշտարարության ենթակա գործով հայցադիմում ներկայացնել դատարան՝ կցելով տեղեկանքը:

15. Ինչպե՞ս է որոշվում հաշտարարի վարձատրության գումարի չափը պարտադիր հաշտարարության դեպքում:

Պարտադիր հաշտարարության գործերով մինչև 2 ժամ տևողությամբ հաշտարարության համար հաշտարարի վարձատրության չափը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ և կազմում է՝

- մինչև մեկ ժամ իրականացված հաշտարարության դիմաց՝ 10.000 ՀՀ դրամ
- մեկ ժամը գերազանցող յուրաքանչյուր 30 րոպեի համար՝ ևս 5.000 ՀՀ դրամ:

Սակայն հաշտարարության կողմերի և հաշտարարի միջև ձեռքբերված համաձայնությամբ՝ հաշտարարի վարձատրության չափը կարող է տարբերվել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դրույքաչափերից:

16. Արդյո՞ք հաշտարարի վարձատրության գումարը կարող է գերազանցել Կառավարության որոշմամբ սահմանված՝ հաշտարարի վարձատրության դրույքաչափերը:

Այո: Կողմերի համաձայնության առկայության դեպքում հաշտարարի վարձատրության չափը կարող է գերազանցել կառավարության որոշմամբ սահմանված՝ հաշտարարի վարձատրության դրույքաչափերը:

17. Ինչպե՞ս է հաշվարկվում հաշտարարի վարձատրության գումարը, երբ հաշտարարության տևողությունը գերազանցում է 2 ժամը:

Այս պարագայում կիրառելի են 2 տարբերակներ:

Առաջին տարբերակ՝ հաշտարարությունը շարունակելու կողմերի համաձայնության առկայության դեպքում հաշտարարի վարձատրության չափը հաշտարարության իրականացման շարունակվող ժամանակահատվածի համար որոշվում է կողմերի և հաշտարարի փոխադարձ համաձայնությամբ:

Երկրորդ տարբերակ՝ եթե հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից հաշտարարի վարձատրության գումարի միջին ուղենիշային գնացուցակ սահմանված չէ, ապա կիրառվում է Կառավարության որոշմամբ սահմանված վարձատրության չափը:

18. Ի՞նչ համամասնությամբ են կողմերը կատարում հաշտարարի վարձատրությունը:

Հաշտարարի վարձատրության գումարը վճարելու պարտականությունը կրում է հաշտարարությունը նախաձեռնած կողմը՝ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, սակայն եթե հաշտարարությունն իրականացվել է երկու կողմի նախաձեռնությամբ, ապա հաշտարարի վարձատրության գումարը վճարելու պարտականությունը կողմերը կրում են հավասարաչափ:

19. Ինչպե՞ս են բաշխվում հաշտարարության ծախսերը, երբ կողմերից մեկը անվճարունակ է:

Եթե կողմերից մեկը անվճարունակ է, ապա նրա համար մինչև 2 ժամ տևողությամբ հաշտարարությունը անվճար է:

Եթե երկու կողմի նախաձեռնությամբ հաշտարարություն է իրականացվել, և մեկ կողմը անվճարունակ է, մյուս կողմը չի ազատվում մինչև երկու ժամ իրականացվող հաշտարարության դիմաց հաշտարարին համամասնորեն վճարելու պարտականությունից (որը, օրինակ՝ 2 ժամ տևողությամբ հաշտարարության դեպքում կկազմի 10.000 ՀՀ դրամ):

20. «Հաշտարարության մասին» օրենքի իմաստով ո՞վ է համարվում անվճարունակ:

Անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը,

- որի ամսական եկամուտը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի կրկնապատիկը (Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 75,000 ՀՀ դրամ x 2 = 150,000 ՀՀ դրամ),
- որը չունի համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ և, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք *կամ* նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

21. Ի՞նչ գործողություն պետք է կատարի այն կողմը, ով անվճարունակ է:

Անվճարունակության հաստատման համար անձը հաշտարարին պետք է ներկայացնի գրավոր հայտարարագիր անվճարունակության պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

22. Ո՞ր փուլում են կողմերը պարտավորվում վճարել հաշտարարի վարձատրության գումարը:

Օրենքը չի սահմանում հաշտարարի վարձատրության վճարման փուլ կամ ժամկետ, ինչից կարելի է եզրահանգել, որ հաշտարարի վարձատրության հարցերը քննարկվում են անմիջապես հաշտարարի հետ, իսկ եթե պարտադիր

հաշտարարությունը իրականացվում է մշտապես գործող հաշտարարական հաստատությունում, ապա հաստատության միջոցով:

Այսպես, օրինակ Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Հաշտարարության կանոնների համաձայն՝ հաշտարարի վարձատրության նախահաշիվը կողմերին է ներկայացվում դիմումը ներկայացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Համապատասխան վճարումը կատարելուց հետո կատարվում է հաշտարարի թեկնածուի հաստատումը և գործը փոխանցվում է հաշտարարին:

Ամեն դեպքում, հաշտարարի վարձատրության վճարման խնդիրներից խուսափելու համար նախընտրելի է թվում մինչև հաշտարարության հանդիպումը հաշտարարի վարձատրության գումարը, օրինակ երկու ժամի չափով վճարելը: Եթե հաշտարարության տևողությունը երկու ժամից ավելի կլինի, ապա պակասող մասով վճարում կարող է իրականացվել հանդիպումից հետո:

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

23. Պարտադիր հաշտարարության գործընթաց սկսելու համար բավարար է արդյո՞ք վիճող կողմերից մեկի դիմումը:

Այո: Պարտադիր հաշտարարության գործընթացը կարող է նախաձեռնվել ինչպես վիճող կողմերի համատեղ դիմումի, այնպես էլ կողմերից մեկի դիմումի հիման վրա:

24. Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործընթացում վիճող կողմերը պետք է հանդես գան ներկայացուցիչների միջոցով:

Վիճող կողմերը պարտադիր հաշտարարության գործընթացին կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով, սակայն հաշվի առնելով հաշտարարության գործընթացի բնույթը և վերջնանպատակը՝ վեճի անմիջական կողմերի մասնակցությունը հաշտարարության գործընթացի արդյունավետության երաշխիքն է:

25. Հաշտարար նշանակվելուց հետո ի՞նչ գործողություններ է պարտավոր ձեռնարկել հաշտարարը:

Հաշտարարը պարտավոր է՝

- Եթե առկա են «Հաշտարարության մասին» օրենքով նախատեսված փոխկապակցվածության հիմքեր կամ այնպիսի հանգամանքներ, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մասին, դրանք բացահայտել կողմերին,
- հաշտարարության ժամանակի և վայրի մասին կողմերին ծանուցել օրենքով սահմանված կարգով,
- կողմերի հետ նշանակել առաջին հանդիպումը և իրականացնել օրենքով սահմանված հաշտարարություն,
- պահպանել հաշտարարական գաղտնիքը:

26. Արդյո՞ք հաշտարարությունը կարող է շարունակվել, երբ առկա են կողմի հետ փոխկապակցվածության հիմքեր:

Փոխկապակցվածության հիմքերի կամ հաշտարարի անաչառության կասկածով պայմանավորված հանգամանքների առկայության դեպքում ***հաշտարարությունը կարող է շարունակվել կամ ավարտվել կողմերի և հաշտարարի փոխադարձ համաձայնության առկայության դեպքում՝*** կողմերի ստորագրությամբ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով:

Հաշտարարությունն առցանց իրականացվելու դեպքում հաշտարարության **շարունակման վերաբերյալ** կողմերի և հաշտարարի փոխադարձ համաձայնության առկայության դեպքում հաշտարարությունը շարունակելու համար բավարար է կողմերի բանավոր հայտարարությունը:

27. Արդյո՞ք հաշտարարի հետ փոխկապակցվածության հիմքերի կամ անաչառության կասկածով պայմանավորված պարտադիր հաշտարարությունն ավարտելը բավարար նախապայման է, այնուհետև, նույն վեճով դատարան դիմելու համար:

Ոչ: Չնայած սույն պարագայում ևս կազմվում է ավարտման արձանագրություն՝ **պարտադիր հաշտարարության իրականացման պահանջը համարվում է չկատարված և ավարտման արձանագրությունը** չի կարող ներկայացվել դատարան որպես պարտադիր հաշտարարության փուլը սպառած լինելու մասին ապացույց: ***Նման իրավիճակում կողմերը կարող են նախաձեռնել պարտադիր հաշտարարության նոր գործընթաց:***

28. Ի՞նչ ժամկետներում է հաշտարարը պարտավոր կազմակերպել հաշտարարության առաջին հանդիպումը:

Կողմի նախաձեռնությամբ հաշտարարին ընտրելու դեպքում հաշտարարը կողմերի հետ առաջին հանդիպումը նշանակում է այդ մասին տեղեկացվելու պահից **10 աշխատանքային օրվա ընթացքում,** իսկ **կողմի դիմումի հիման վրա արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակման դեպքում՝** ընտրության արդյունքների մասին արձանագրությունն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

29. Արդյո՞ք կողմերը պարտավոր են մասնակցել պարտադիր հաշտարարությանը և ի՞նչ հետևանքներ են առաջանում չմասնակցելու կամ հրաժարվելու դեպքում:

Եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ապա **հաշտարարության մասնակիցները պարտավոր են մասնակցել հաշտարարությանը**: Այն պարագայում, երբ կողմերից մեկը հրաժարվում է կամ առանց հարգելի պատճառի չի մասնակցում հաշտարարության առաջին հանդիպմանը, **ապա հաշտարարությունը ավարտվում է և կազմվում է ավարտման վերաբերյալ արձանագրություն**, որն էլ հիմք է, հետագայում, նույն վեճով դատարան դիմելու համար:

30. Ի՞նչ եղանակով է իրականացվում հաշտարարության վերաբերյալ կողմերի ծանուցումը:

Արդարադատության նախարարության կողմից հաշտարար նշանակվելու դեպքում հաշտարարը կողմերի ծանուցումը իրականացնում է նախարարություն ներկայացված դիմումում նշված տեղեկություններին համապատասխան:

Այն պարագայում, երբ հաշտարարին ընտրում են կողմերը՝ փոխադարձ համաձայնությամբ, ապա հաշտարարը կողմերի ծանուցումը իրականացնում է կողմերի հայտնած պատշաճ ծանուցման համար անհրաժեշտ տվյալների հիման վրա:

Եթե կողմերը չեն ներկայացրել ծանուցման նախընտրելի եղանակ, ապա հաշտարարության կողմերի ծանուցումը հաշտարարը, որպես կանոն, իրականացնում է հետևյալ տարբերակներով՝

- *Պատվիրված նամակով կամ*
- *Առձեռն:*
- *Կողմերի գրավոր միջնորդությամբ ծանուցումը կարող է իրականացվել՝*
- *Էլեկտրոնային փոստի միջոցով կամ*
- *Հաղորդակցության այլ միջոցներով:*

Էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով ծանուցումներն ուղարկելու անհնարինության պարագայում դրանք ուղարկվում են պատվիրված նամակով կամ հանձնվում են առձեռն:

31. Ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկի հաշտարարը այն դեպքում, երբ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկելու դեպքում չի ստանում ծանուցման մասին անդորրագիրը:

Եթե ծանուցումը պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հաշտարարը (հաշտարարական հաստատության կողմից իրականացվելու դեպքում՝ հաստատությունը) չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), **ապա ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (azdarar.am):** Նշված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, կողմը համարվում է պատշաճ ծանուցված:

32. Արդյո՞ք կողմերը պարտավոր են հաշտարարին հայտնել իրենց հասցեների փոփոխության մասին և ի՞նչ հետևանքներ են առաջանում չհայտնելու պարագայում:

Այո: Կողմերը պարտավոր են հաշտարարին անհապաղ հայտնել հաշտարարության ընթացքում իրենց հասցեի, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեի կամ հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում համապատասխան ծանուցումն ուղարկվում է այն հասցեով, որով կատարվել է ծանուցումը և կողմի վերջին հայտնի հասցեով ուղարկվելու ուժով համարվում է պատշաճ հանձնված:

33. Արդյո՞ք պարտադիր հաշտարարությունը կարող է իրականացվել նաև առցանց:

Այո: Կողմերի փոխադարձ համաձայնության առկայության դեպքում հաշտարարությունը կարող է իրականացվել առցանց եղանակով՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, այդ թվում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր հասանելի տեխնոլոգիաների զուգակցմամբ:
Առցանց հաշտարարության իրականացման դեպքում հաշտարարության գործընթացն ավարտված համարելու մասին արձանագրությունը կողմի ցանկությամբ հաշտարարի կողմից կարող է տրամադրվել էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով հաշտարարության գործընթացն ավարտված համարելու մասին էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված արձանագրությունը:

34. Արդյո՞ք հաշտարարության հետ կապված տեղեկությունները կարող են հրապարակվել:

Հաշտարարությունը մասնավոր և գաղտնի գործընթաց է և հետևաբար հաշտարարության հետ կապված տեղեկությունները գաղտնի են և ենթակա չեն հրապարակման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

35. Միջինում քանի՞ օր կարող է տևել պարտադիր հաշտարարության գործընթացը:

Թեև օրենքով պարտադիր հաշտարարության գործընթացի համար ժամկետ նախատեսված չէ, պրակտիկայում այն միջինում տևում է 1-2 շաբաթ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԸ

36. Ե՞րբ է ավարտվում պարտադիր հաշտարարության գործընթացը:

Պարտադիր հաշտարարության գործընթացը ավարտվում է երբ՝

- կողմերի միջև կնքվում է վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն,
- «Հաշտարարության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում կազմվում է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն:

37. Ո՞ր դեպքերում է կազմվում հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն:

Այն դեպքում, երբ՝

- հաշտարարը հայտարարում է այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք բացառում են վեճը հաշտարարության միջոցով լուծելու հնարավորությունը,
- կողմերի միջև առկա է համաձայնություն առանց հաշտության համաձայնություն կնքելու հաշտարարության գործընթացի ավարտման վերաբերյալ,
- կողմերից մեկը հաշտարարին գրավոր հայտնում է առանց հաշտության համաձայնություն կնքելու հաշտարարության գործընթացի ավարտման ցանկության մասին,
- կողմերից մեկը հաշտարարին գրավոր հայտնում է հաշտարարության գործընթացին մասնակցելուց հրաժարվելու մասին,
- կողմը հաշտարարին թեև գրավոր չի հայտնում հաշտարարության գործընթացին մասնակցելուց հրաժարվելու մասին, սակայն առանց հարգելի պատճառի հրաժարվում է մասնակցել հաշտարարության առաջին հանդիպմանը,
- հաշտարարության իրականացման ընթացքում ի հայտ է եկել հաշտարարի անաչառության կասկածներ կամ փոխկապակցվածության հիմքեր, և օրենքով սահմանված կարգով հաշտարարը և կողմերը չեն որոշել անտեսել այդ հիմքերը,
- հաշտարարը հայտարարում է երեխայի լավագույն շահի պաշտպանության նպատակով հաշտարարության ավարտման անհրաժեշտության մասին:

38. Ի՞նչ պահանջների պետք է համապատասխանի հաշտության համաձայնությունը:

Թեև օրենքը չի պարունակում հաշտության համաձայնության ձևին ներկայացվող պահանջներ, հաշտության համաձայնությունը, որպես կանոն, պետք է պարունակի՝

1) կողմերի անձնագրային տվյալները,
2) գործի նախապատմությունը,
3) հաշտության համաձայնության կնքման տարին, ամիսը, ամսաթիվը,
3) հաշտության համաձայնության պայմանները,
5) կողմերի ստորագրությունները,
6) հաշտարարի անունը, ազգանունը, հաշտարարի ստորագրությունը:

Հաշտության համաձայնության պայմանները չպետք է՝

7) հակասեն օրենքին կամ այլ իրավական ակտերին.
8) խախտեն այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը.
9) պարունակեն այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել.
10) պարունակեն այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

39. Ի՞նչ տեղեկություններ պետք է պարունակի հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը:

Հաշտարարության ավարտման մասին արձանագրությունը պետք է պարունակի՝

1) կողմերի անունները, հասցեները (առկայության դեպքում նաև այլ տվյալներ),
2) ամուսնաընտանեկան վեճի տեսակը,
3) հաշտարարության ավարտման հիմքը,
4) հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրության կնքման տարին, ամիսը, ամսաթիվը,
5) հաշտարարության տևողության, հաշտարարության սկզբի և ավարտի մասին նշում,
6) հաշտարարի անունը, ազգանունը, հաշտարարի ստորագրությունը (օրենքով նախատեսված դեպքերում կողմի/կողմերի ստորագրությունը),
7) հաշտարարի գրառումը կողմերից մեկի կողմից ստորագրելուց հրաժարվելու/մյուս կողմի չստորագրելու մասին:

40. Ովքե՞ր են ստորագրում հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը:

Հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը ստորագրվում է կողմերի և հաշտարարի միջև, որը ոչ ուշ, քան հաջորդ օրը տրամադրվում է կողմերին: **Եթե կողմը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա հաշտարարն այդ մասին նշում է կատարում արձանագրությունում:**

Այն դեպքերում, երբ կողմը առանց հարգելի պատճառի հրաժարվում է մասնակցել հաշտարարության առաջին հանդիպմանը՝ հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը ստորագրվում է հաշտարարի և ներկայացած կողմի միջև, հաշտարարը նշում է կատարում արձանագրությունում մյուս կողմի չստորագրելու մասին:

Առցանց հաշտարարության դեպքում կողմերի ստորագրությունը հաշտարարության գործընթացն ավարտված համարելու մասին արձանագրությունում անհրաժեշտ չէ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

41. Ո՞ր դեպքում է մինչև 2 ժամ հաշտարարությունը փոխհատուցվում:

Պարտադիր հաշտարարության ենթակա վեճերով մինչև 2 ժամ տևողությամբ հաշտարարության համար վճարված գումարը ենթակա է փոխհատուցման հետևյալ չորս պայմանների **միաժամանակյա** առկայության դեպքում՝

1) հաշտարարությունը չի ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ և կազմվել է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն,
2) հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան ներկայացվել է հայցադիմում,
3) հայցը մերժվել է կամ մասնակի է բավարարվել,
4) հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն:

42. Ո՞ւմ կողմից և ե՞րբ է փոխհատուցվում մինչև 2 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարը:

Փոխհատուցումը վճարվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝ **դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում**՝ հայցվորի կողմից նախարարություն ներկայացված դիմումի հիման վրա:

43. Ի՞նչ է անհրաժեշտ կցել արդարադատության նախարարություն ներկայացվող՝ մինչև 2 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարի փոխհատուցման մասին դիմումին:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

– դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը,
– անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
– հաշտարարության տևողության, հաշտարարության սկզբի և ավարտի մասին նշում պարունակող հաշտարարության ավարտի արձանագրության պատճենը:

44.Արդյո՞ք պարտադիր հաշտարարության գործերով մինչև 2 ժամ տևողությամբ հաշտարարության համար հաշտարարի վարձատրության գումարը պետական բյուջեից ենթակա է փոխհատուցման այն դեպքում, երբ հաշտարարությունը իրականացվել է մշտապես գործող հաշտարարական հաստատության միջոցով և/կամ կողմերը համաձայնության են եկել հաշտարարի վարձատրության այլ չափերի շուրջ:

Անկախ հաշտարարության գործընթացի կազմակերպման ձևից և/կամ կողմերի միջև հաշտարարի վարձատրության չափի վերաբերյալ այլ համաձայնության առկայությունից՝ օրենքով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում՝ անձը իրավունք ունի մինչև 2 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարության գործընթացի համար ստանալ հաշտարարի վարձատրության գումարի փոխհատուցում՝ կառավարության սահմանած դրույքաչափերով (մինչև մեկ ժամը՝ 10.000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հաջորդ 30 րոպեն՝ 5.000 ՀՀ դրամ):

ԲԱԺԻՆ

VI

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ, ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

45. Ի՞նչ հետևանք է առաջացնում առանց պարտադիր հաշտարարության փուլը սպառելու դատարան դիմելը:

Առանց պարտադիր հաշտարարության փուլը սպառելու դատարան ներկայացված հայցադիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն ենթակա է վերադարձման:

46. Ե՞րբ և ինչպիսի՞ հիմքերի առկայության դեպքում անձը կարող է պարտադիր հաշտարարության ենթակա ամուսնաընտանեկան գործերով դիմել դատարան:

Անձը պարտադիր հաշտարարության ենթակա ամուսնաընտանեկան գործերով կարող է դիմել դատարան այն ժամանակ, երբ

1) նույն հարցով դիմել է հաշտարարի՝ պարտադիր հաշտարարություն իրականացնելու համար և արդյունքում այն ավարտվել է, կազմվել է ավարտման արձանագրություն (բացառությամբ հաշտարարի անաչառության կասկածի հանգամանքով կամ փոխկապակցվածության հիմքով կազմված ավարտման արձանագրության),

կամ

2) հաշտարար նշանակելու համար դիմել է Արդարադատության նախարարություն և հաշտարար չի նշանակվել:

Առաջին դեպքում՝ դատարան հայցադիմում ներկայացնելու հետ միաժամանակ ներկայացվում է ավարտման արձանագրությունը, իսկ երկրորդ դեպքում արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկանքը՝ հաշտարարի նշանակման անհնարինության մասին:

47.Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել կողմը, երբ ամուսնաընտանեկան վեճով կնքվել է հաշտության համաձայնություն, սակայն մյուս կողմը հրաժարվում է ձեռքբերված պայմանավորվածությունից և չի կատարում հաշտության համաձայնությամբ ստանձնած իր պարտականությունը:

Հաշտարարության կողմերից մեկի կողմից հաշտության համաձայնությամբ ձեռքբերված պայմանավորվածությունը չկատարելու դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից 6 ամսվա ընթացքում դիմել դատարան՝ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու պահանջով:

Դիմումի քննության արդյունքներով դատարանը 7-օրյա ժամկետում կայացնում է **վճիռ՝ հաշտության համաձայնությունը հաստատելու կամ դիմումը մերժելու մասին:** *Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:* Ընդ որում, պարտադիր հաշտարարության գործերով արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դիմումների համար «Պետական տուրքի մասին օրենքի» 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված **20,000 ՀՀ դրամ պետական տուրքը նվազեցվում է** արտոնագրված հաշտարարին **մինչև երկու ժամ իրականացված հաշտարարության դիմաց վճարած գումարի չափով**, բայց ոչ ավելի, քան Կառավարության որոշմամբ սահմանված դրույքաչափի, և ոչ պակաս, քան բազային տուրքի 10-ապատիկի չափով:

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Սույն դիմումը ներկայացվում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն՝ հաշտարարության իրականացման համար:

AMCA Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

«Հաշտարարության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2.1. մասով սահմանվում է, որ *ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:*

Սույն դիմումի ձևաթուղթը նախատեսված է պարտադիր հաշտարարության գործերով Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն ներկայացվող դիմումների համար:

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿՈՂՄ 1 (ԴԻՄՈՒՄԱՏՈՒ)

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ / ՆՔ համար	
Քաղաքացիություն	
Հասցե	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստ	

Ներկայացուցչի առկայության դեպքում՝

- Անուն, ազգանուն, հայրանուն
- Փաստաբանական արտոնագիր
  (եթե ներկայացուցիչը փաստաբան է)
- Հեռ./էլ. փոստ՝

ԿՈՂՄ 2

Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրային տվյալներ	
Քաղաքացիություն	
Հասցե	

Հեռախոսահամար

Էլեկտրոնային փոստ

Ներկայացուցչի առկայության դեպքում՝

- Անուն, ազգանուն, հայրանուն
- Փաստաբանական արտոնագիր

(եթե ներկայացուցիչը փաստաբան է)

- Հեռ./էլ. փոստ՝

ՎԵՃԻ ԲՆՈՒՅԹԸ

Նշել համապատասխան դաշտերը « ☑ » նշանով

☐ Ամուսնալուծություն
☐ Երեխայի բնակության վայրի որոշում
☐ Ալիմենտի բռնագանձում
☐ Համատեղ սեփականության բաժանում
☐ Ծնողական իրավունքների իրականացում (դաստիարակության, կրթության, շփման հարցերով)
☐ Երեխայի տեսակցության կարգի սահմանում
☐ Ամուսնական պայմանագրի փոփոխում կամ լուծում
☐ Այլ (նշել՝ _____)

ՆՇՈՒՄՆԵՐ՝

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

☐ Կենտրոնում ☐ Առցանց ☐ Այլ (նշել՝ _____)

ՀԱՇՏԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

☐ Առաջադրել հաշտարար

(նշել հաշտարարի անունը և ազգանունը՝ _____)

☐ Հաշտարարի նշանակումը պատվիրակել Կենտրոնի քարտուղարությանը:

Ծանոթություն. *Հաշտարարի չառաջադրման դեպքում նշանակումն իրականացնում է Կենտրոնը:*

ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

N	Կից ներկայացվող փաստաթղթի անվանումը	Առդիր

Ամսաթիվ՝ ☐☐/☐☐/☐☐☐☐թ., Երևան, Հայաստան

կողմ 1-ի անուն և ազգանուն

Կողմ 2-ի անուն և ազգանուն